ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

N _____ 6 դեկտեմբեր, 2017թ.

ՀԵՏՔ ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ ԼՐԱԳՐՈՂ
ՍԵԴԱ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Ղուկասյան

Ի պատասխան պատգամավորական գործունեության վերաբերյալ տեղեկություն ստանալու մասին Ձեր հարցման՝ հայտնում եմ, որ Ազգային ժողովի վեցերորդ գումարման առաջին և երկրորդ նստաշրջանների ընթացքում 7(յոթ) անգամ կազմակերպել եմ քաղաքացիների ընդունելություն: Քաղաքացիները դիմել են տարաբնույթ խնդիրներով՝ սկսած գործող օրենքի կամ առաջարկվող օրենքի նախագծերի մասին պարզաբանումներ ստանալուց մինչև սոցիալական աջակցություն ստանալը: Քաղաքացիների ընդունելություններից լուսանկարներ առկա չեն:

Քաղաքացիների կողմից բազմաթիվ խնդիրների բարձրաձայնումը նպաստել և նպաստում են իմ պատգամավորական գործունեությանը:

Նշված ժամանակահատվածում քաղաքացիների կողմից գրավոր առաջարկներ չեմ ստացել, բայց ստացել եմ բազմաթիվ դիմումներ և նամակներ, որոնցում քաղաքացիները մատնանշել են իրենց առնչվող կամ մտահոգությունների առարկա հանդիսացող մի շարք խնդիրներ: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանափակվում է տեղեկատվության տրամադրումը, եթե դա խախտում է նամակագրության գաղտնիությունը, ուստի չեմ կարող Ձեզ հայտնել դիմումատուների մասին տեղեկատվություն: Դիմումները եղել են «Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին», «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքների նախագծերի, զոհված (մահացած) կամ հաշմանդամ դարձած զինծառայողների (ազատամարտիկների) ընտանիքների բնակարանային պայմանների բարելավման շահառուների ցուցակներում ընդգրկվելու կարգի և բազմաթիվ այլ հարցերի վերաբերյալ: Բոլոր դիմումներին և նամակներին սահմանված կարգով տրվել են պատասխաններ:

Հարգանքով՝

ԿՈՐՅՈՒՆ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ